№ 156 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23 1900 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23 № 156

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անյայտ երկիրներ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղացու ցաւերից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական գործեր. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն.

ԱՆՅԱՅՏ ԵՐԿԻՐՆԵՐ

Աղգագրական «Globus» հրատարակութեան մէջ Զինգեր զետեղել է մի յօդուած այն աշխարհագրական յայտնագործութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել տասնիններորդ դարի ընթացքում և հարց է տալիս, թէ ի՞նչ երկիրներ դեռ մնացել են անյայտ երկրագնդիս վրա և պէտք է հետազօտվեն առաջիկայ քսաներորդ դարում:

Այդ դեռ անյայտ, դեռ չուսումնասիրված երկիրների շարքում նա ամենայն իրաւամբ համարում է և Առաջաւոր Ասիան: Եւրոպական գիտութեան համար մնացել են դեռ անծանօթ Զինաստանի, Հնդկաստանի, Աֆրիկայի, Աւստրալիայի մի քանի կէտերը, և մեզ մերձակայ տեղերից Թիւրքիայի, Պարսկաստանի մասերը և Արաբիայի խորքերը:

Որքան և ցաւալի լինի այդպիսի խոստովանութիւնը, բայց բոլորովին իրաւացի է, որ մեր շուրջը գտնվող երկիրները դեռ մնում են բոլորովին անյայտ և անծանօթ: Քիւրդերի, եզիդիների, գիւրզիների, դերսիմցիների, լազերի, լօռերի, կովկասեան լեռնականների երկիրները մինչև այժմ մնում են դժուարմատչելի և լուրջ հետազօտութիւնների համար դեռ անկարելի կամ շատ անյարմար: Ամենքը յիշում են այն դեռ թարմ դէպքը, որ տեղի ունեցաւ երկու տարի սրանից առաջ Վանի շրջակայքում գերմանական Բելկ գիտնականի հետ, որ ենթարկվեց յարձակումների քիւրդերի կողմից: Վանեցիների գոյութեան շնորհիւ շատերը չեն վստահանում նոյն իսկ փորձ անել մտնելու Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանագծի վրա գտնվող երկիրները, որտեղ հետազօտութեան համար կան հարուստ նիւթեր թէ հնագիտական և պատմական և թէ առևտրական-արդիւնագործական տեսակէտներից:

Սակայն միթէ՞ լուրջ հետազօտութեան են ենթարկվել նոյն իսկ մեր երկրի այն մասերը, որոնք մատչելի են երթևեկութեան համար և բնակեցրած են այնպիսի ազգագրական տարրերով, որոնք առանձին խորթութիւն չեն ցոյց տալիս դէպի զանազան տեսակ ուսումնասիրութիւնները: Միթէ՞, օրինակ, հայերով բնակեցրած տեղերը ուսումնասիրվել են փոքր ի շատէ բաւարար կերպով և յայտնի են այդ ազգի կենցաղավարութիւնը, նրա թիւը, նրա բնակութեան բոլոր տեղերը:

Ոչ: Քսաներորդ դարի շէմքում հայերը, չը նայելով այն հանգամանքին, որ ունեն կրթված դասակարգ, գրականութիւն, դպրոց, մամուլ, մնում են դեռ բոլորովին չուսումնասիրված մի ազգութիւն, որի թէ ցեղագրական առանձնայատկութիւնները և թէ ներկայ կեանքը մնում են անյայտ վիճակի մէջ:

Ժամանակ է, որ գոնէ քսաներորդ դարի սկզբում այդ ժողովրդի բանիմաց դասը հոգար նրան ուսումնասիրելու եւ այդ ուսումնասիրութիւնից օգտվելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՑՈՒ ՑԱՒԵՐԻՑ

I

Հողի սակաւութիւնը զգալի է ընդհանրապէս Ախալքալաքի գաւառի բոլոր գիւղերում, որոնք, գրեթէ առանց բացառութեան, զուրկ են իրանց սահմաններն ընդարձակելու հնարաւորութիւնից, որովհետեւ չը կան սահմանակից ազատ հողեր: Եւ պարզ է, որ տարէցտարի աւելի զգալի պիտի լինի հողի պակասութիւնը, քանի որ ազգաբնակութիւնն աճում է, իսկ հողը մնում է նոյնը:

Սակայն բացի ազգաբնակութեան աճումից, որ բնական երեւոյթ է, կան ուրիշ պատճառներ էլ, որոնք սարսափելի ծանրացնում են սակաւահողութեան հետեւանքները եւ որոնք կարող են վերացվել, եթէ գիւղացիները հասարակական հողերի կառավարութիւնը բարեկարգեն եւ աւելի արդարութիւն մտցնեն իրանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ:

Վերցնենք Գանձան, որն իր սահմանների ընդարձակութեամբ գաւառի առաջնակարգ գիւղերից մին է: Նա ունի 5,780 դեսեատին հող, որից 2,810-ը վարելահող է, իսկ մնացածը արօտատեղի: Եթէ այդ հողը բաժանվէր Գանձայի մօտ 740 տղամարդկանց վրա, իւրաքանչիւրին պիտի հասնէր մօտ 4 դեսեատին վարելահող կամ $7^3/_4$ դեսեատինից աւել վարելահող եւ արօտատեղի միասին: Այնպէս որ 5 տղամարդ ունեցող գիւղական միջակ ընտանիքն իր շահեցողութեան տակ պիտի ունենար մօտ 20 դեսեատին վարելահող եւ $18^3/_4$ դեսեատին արօտատեղի, որի բարեխիղճ մշակումը, նոյն իսկ հին պապական եղանակով, լիապէս պիտի կարողանար գոհացնել գիւղական այդ ընտանիքի համեստ պահանջները, առանց ստիպելու խեղճերին դիմել վաշխառուներին, կամ գնալ ուրիշի հողը մշակել: Սակայն ինչ ենք տեսնում իրականութեան մէջ:—Գանձացի ոչ միայն իւրաքանչիւր աղքատ, այլ նոյն իսկ եւ միջակ ընտանիք ամեն տարի, գրեթէ առանց բացառութեան, ստիպված է գնել թէ տան ուտելիք ու ցանելիք հացը եւ թէ անասունների ձմեռվայ պաշարը: «Ինչու», կը հարցնէ ընթերցողը: Ահա թէ ինչու:

Մեր գաւառի ժողովուրդը այս դարի սկզբներին, երբ գաղթել է Կարինից, գտել է իր Արասի մահից յետոյ այդ պատերազմների մի արիւնահեղ գործողութիւնն էլ տեղի ունեցաւ Հայաստանի հողի վրա, երբ 1635-ին սուլթան Մուրադ IV անձամբ պաշարեց Երեւանը եւ մի ամբողջ շաբաթ ռմբակոծելուց յետոյ՝ գրաւեց նրան: Բայց դեռ նոր էր Մուրադը յաղթողի փառքով մտել Կ. Պոլիս, երբ պարսիկները յարձակվեցան Երեւանի վրա եւ յետ խլեցին օսմանցիների ձեռքից: Այս գործողութիւնների միջոցին ամբողջ Արարատեան երկիրը եւ նրա սահմանակից գաւառները դարձեալ քարուքանդ եղան, բնակիչների մեծ մասը գերի տարվեց եւ նոր շունչ սկսած երկիրը դարձեալ ծածկվեց աւերակներով: Մովսէս Կաթողիկոսը հազիւ էր կարողացել մի քանի չինութիւններ բարձրացնել Էջմիածնի աւերակների մէջ, բայց դրանք էլ տապալվեցան յանկարծահաս պատերազմական փոթորիկներից եւ նրա յաջորդ Փիլիպպոս կաթողիկոսին մնում էր նորից զինվել համբերութեամբ եւ նորից չինել քանդվածները:

Բայց այդ կործանումը ունէր գոնէ այն մխիթարական հանգամանքը, որ վերջինն էր XVII դարում. Թիւրք-պարսկական ընդհարումները այլ եւս տեղի չունեցան Հայաստանի այս կողմերում եւ երկար ժամանակ ժողովուրդը ազատ էր աշխարհաւեր պատուհասից ու մրջիւնի չարքաշութեամբ կարող էր նորից ճիգեր թափել իր քանդված բոյները վերաշինելու համար: Դա արդէն մեծ թեթեւութիւն էր. հայ ազգի առաջ այլ եւս միայն արիւնոտ իրականութիւնը չէր, որ մոռացնել է տալիս մարդկային բոլոր միւս հոգսերը եւ մանաւանդ այն պիսիները, որոնք մտքի զարգացման են վերաբերվում: Այդ համեմատաբար խաղաղ ժամանակների արդիւնքն են վանական դպրոցները, Ոսկան վարդապետը, տպագրված գրքերը:

Սակայն ժողովուրդը, ինչ ասել կուզի, նոյն պիղծ ռայեան էր, նոյն ստրուկը: Չը կայ, ճիշտ է, ընդհանուր սրածութիւնը, ամբողջ գաւառներ չեն դատարկվում եւ լուռ գերեզմանոցներ դառնում, բայց թաթարական իսլամի լուծը չարունակում է արիւն-արտասունք կաթեցնել, թունաւորել քրիստոնեայ նախրի հոգին ու ուղեղը: Խաղաղ կեղեքումները, մասնական աւերումները չեն վերացել եւ վերանալ չեն կարող: Եւ կարո՞ղ ենք ասել թէ այդ դանդաղ, քիչ նկատելի տանջանքները ոչինչ են՝ համեմատած պատերազմական աւերմունքների հետ: Թիւրք հեղինակներից մէկը, Խօջի-ըէկ, սուլթան Մուրադին ներկայացրած մի մանրամասն զեկուցագրի մէջ ասում էր. «40 կամ 50 ասպէրի փոխարէն, որ ստացվում էր իւրաքանչիւր տանից, գիւղացին այժմ տալիս է գլխահարկ 240 ասպէր. 40 ասպէր կողմնակի տուրքերի փոխարէն գիւղացիներից այժմ առնում են 300, իսկ իւրաքանչիւր ոչխարից՝ կէս ասպէրի փոխարէն առնում են 7 կամ 8 ասպէր... Կարճ ասելով, այսպիսի հարստահարութիւններ եւ կեղեքումներ դեռ երբէք տեղի չեն ունեցել ոչ մի երկրում, ոչ մի պետութեան մէջ: Եւ սակայն, եթէ մուսիւլմանական երկիրների բնակիչներից մէկը ենթարկվում է նոյն իսկ թեթեւ կեղեքումների, ահեղ դատաստանի օրը դրա համար պատասխանատու է միապետը եւ ոչ թէ պաշտօնեաները. եւ միապետը չը պիտի կարողանայ արդարանալ տիեզերքի Տիրոջ առաջ, ասելով. «ես այս պաշտօնեաներին էի յանձնել իմ հպատակներին: Սովից մեռնողների հեծեծանքներից քանդվում են տների պատերը, իսկ կեղեքվողների արտասունքները խեղդում են կայսրութիւնները կործանման ալիքների մէջ» *):

Այս տողերը գրված են դեռ 1630-ին, այն ժամանակ, երբ Թիւրքիայի տէրը քաջ եւ ուժեղ Մուրադ IV-ն էր, որ նախկին զինուոր—սուլթանների օրինակն էր ցոյց տալիս, որից վախենում էին եւ որն աշխատում էր ահագին պետութեան մէջ կարգ ու կանոն պահպանել: Իսկ ինչ պիտի լինէր դրութիւնը նրա թուլամորթ եւ մեղկ յաջորդների ժամանակ, երբ կառավարողը իրապէս հարեմի հարճերն էին եւ ներքինիները: Խօջի-ըէկը այսքան ճշմարտութիւն էր ասում ահարկու փադիշահի դէմքին. իրականութիւնը, անշուշտ, աւելի եւս դառն խօսքերի առիթ պիտի տար. եւ կեղեքումներ մերկացնող թիւրքը, անշուշտ, գլխաւորապէս մահմեդական հարկատուների հեծեծանքներն ունէր ի նկատի, իսկ քրիստոնեայ ռայեան որքան էր նախանձում իսլամ հարկատուներին...

Կարիք չը կայ ասելու, որ դրութիւնը լաւ չէր եւ Պարսկաստանում: Տեսնենք հարկահանութեան մի պատկեր, որ տալիս է Զաքարիա պատմագիրը **): Գործողութիւնը կատարվում է Քանաքեռ գիւղում: Զմեռն է, Երեւանի խանի կողմից գիւղն է եկել մի ոմն Ասլանաղա, որ Թիւրքիայից է փախել, անցել խանի մօտ եւ հարկերի տեսուչ է նշանակվել, հետեւաբար նրա գործողութիւնները կարող են եւ Թիւրքիայում գործադրվող հարկահանական սիստեմի մի նմուշ դառնալ: Ասլան աղան հրամայում է գիւղացիներին «ցոյց տալ գլուխները», այսինքն իր առջեւ հանել այն ամենքին, որոնք հարկ պիտի տան եւ ցուցակագրվեն: Գիւղացիները տանում են իրանց երեխաներին նրա մօտ: «Իմ հայր Մկրտիչը—ասում է Զաքարիան—չալակեց ինձ, իսկ իմ եղբայր Խաչատուրին առաջ գցած՝ գնաց: Եւ երբ Ասլան աղան տեսաւ մեզ փոքր եւ կաղլիկ, ծուռ ոտներով, բարկացաւ եւ ասաց հօրս. «քո առողջ որդին պահել ես, իսկ անդամալոյծները բերել». եւ հրամայեց, որ նրան երեսի վրա գետին գցեն, եւ ջուր բերին ու թափեցին նրա վրա, ոտքից մինչեւ գլուխ ջրողող տրին. մի մարդու նստեցրեց նրա գլխի վրա, միւսին.—ոտների վրա եւ հրամայեց չորս զինուորներին, որ երկու կողմից խփեն. այնքան խփեցին, որ մորթը մարմնից բաժանվեց եւ ինքը անշնչացաւ.

*) Лависъ и Рамбо—„Всооб. Ист:“, т. V, եր. 799.

**) «Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, եր. 65—67.

քրտինքի վաստակը։ Ի՞նչ անէ խեղճ գիւղացին, ուր դիմէ. ինքը անկիրթ, անուս, դրացիներն անխիղճ ու անօրէն։ Միակ փրկութեան դուռը պարաքն է, որի մէջ արդէն մինչեւ բուկը թաղված է։ Իսկ հասարակական շահերի «պաշտպան» հարուստները վարում են ու վարում տասնեակ օրավարներով գիւղի արօտը ու տարիներ շարունակ հանգիստ վայելում այդ հողի պտուղը, որի նոյն իսկ օրինական հարկը չեն վճարում, որովհետեւ այդ հողերը վարել են հողաբաժնից յետոյ, ուստի եւ գրված չեն գիւղի հողային ցուցակում։ Այնպէս որ յիշեալ պարոններից ամեն մինը եթէ վճարում է 20 դեսեատին վարելահողի հարկ, մշակում է կրկնապատիկը եւ էլ աւելի։

Զաւախեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կարս, օգոստոսի 20-ին

Խնդրում եմ «Մշակում» տեղ տալ հետեւեալ նամակիս։

Եղիշէ վարդապետ Մուրադեանը «Մշակի» № 139-ում կամենալով պատասխանել իմ նոյն լրագրի № 129-ի մէջ տպած նամակին՝ ի միջի այլոց գրում է եւ իմ մասին, թէ իբր ես նրա անունով զանազան խանութներից լաթեր եմ առել եւ գործադրել, ինչպէս իմ կամքն է եղել, ու փողերը մինչեւ այժմս չեմ վճարել եւ փոխարինաբար վերցրել եմ Յակովբ քահանայ Կիրակոսեանից մի փոքրիկ գումար եւ իր ժամանակին չեմ վերադարձրել։ Այս մասին չը կամենալով լրագրութեամբ պատասխանել, աչքի առաջ ունենալով շատ եւ շատ անյարմարութիւններ, դիմեցի Եղիշէ վարդապետին եւ խնդրեցի միջնորդ դատարան նշանակել այդ հարցի առիթով, բայց նա մերժեց։ (Այն նամակի պատճէնը, որով առաջարկեցի միջնորդ դատարան, ուղարկում եմ ձեզ *)։ Այժմ կրկին անգամ եւ հրապարակով յայտնում եմ, որ ես ոչ մի անձնական հաշիւ չեմ ունեցել Յակովբ քահանայի հետ եւ նրանից փոխարինաբար ոչինչ չեմ վերցրել։ Իսկ ինչ վերաբերում է վարդապետի անունով լաթեր առնելուն՝ նոյնպէս սուտ է, որ ես օգտվել եմ, իբր թէ, նրա անունով եւ իմ անձնականի համար որ եւ է բան վերցրել։ Իսկ որպէս զի այս հարցը վերջնականապէս պարզվի եւ իւրաքանչիւր մարդ իր իսկական գոյնով երեւայ, կրկին առաջարկում եմ այդ խնդիրը յանձնել միջնորդ դատարանի։ Եթէ արդար է Եղիշէ վարդապետը՝ թող համաձայնվի այս իրաւացի առաջարկութեանս։ Ինչ վերաբերում է նրա նամակի մնացած կէտերին, աւելորդ է այդպիսի «նէյնիմներին» ուշադրութիւն դարձնել մինչեւ անգամ պատասխանել. թող նա էլ միթարվի իր կենսագրութիւնը գրելով ինչ կը պակասի մեզանից, եթէ նոյն իսկ նրա բոլոր ասածները ճիշդ լինեն իր գործունէութեան մասին։ Ապագան կը պարզէ ամեն բան, երբ բոլոր հաշիւները կը տեսնվին եւ իրականութիւնը յայտնի կը լինի։ Անցաւ այն ժամանակը, երբ Եղիշէ վարդապետը կարող էր «թող փչել» հասարակութեան աչքին. այժմ ամենքը նրան ճանաչում են։

Ն. Նոհրատեան

*) Խմբագրութիւնը ստացել է այդ պատճէնը։ Ե. Խ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կօջօր, օգոստոսի 3-ին

Ի պատասխան «Մշակի» № 142-ի մէջ Կօջօրից հաղորդած լուրին, պատիւ ունեմ յայտնելու, որ յայտարարութիւն եմ կպցրել եկեղեցու գաւթի դրանը Գրիգոր Զանչեանի մահվան առիթով անցեալ յուլիսի 30-ին կատարվելիք հոգեհանգստի մասին եւ բացի այդ ես եւ տիրացուն յայտնել ենք Կօջօրի մեր ծանօթներին, միմեանց յայտնելու համար եւ եթէ լրագրութեան չեմ յայտնել, պատճառը լրագրութեան մէջ յայտարարելու ծախսն է եղել, որ ես չէի կարող ինձ վրա վերցնել։ Հոգեհանգստի մասին տիրացուի բերանով յայտնել եմ երէցփոխին, բայց երեցփոխը լսել անգամ չէ կամեցել տիրացուին, որովհետեւ իմ յարաբերութիւնը յարգելի պատճառներով վաղուց կտրել եմ երէցփոխի հետ։ Կիսայրեալ մոմեր եմ գործածել, դարձեալ ինքս ծախս չանելու համար։ Ժողովրդականները բոլորն էլ մասնակցել են հոգեհանգստին եւ չէին կարող կարծել, թէ Թայիրեանների սովորական հոգեհանգիստներից է, քանի որ Թայիրեանները ունեն եկեղեցու գաւթում իրանց սեփական դամբարանը, պատած երկաթեայ վանդակով, որի մէջ եւ կատարվում են նրանց հոգեհանգիստները։ Հանգուցեալի մասին մի քանի խօսք չեմ ասել, որովհետեւ այդ օրը, տարաբախտաբար, տկար եմ եղել եւ բացի այդ իբրեւ պատարագիչ, քառաձայն խմբով, երկու եւ կէս ժամ պատարագ անելուց յետոյ, բոլորովին յոգնած եմ եղել եւ բացի այդ Կօջօրի արիստոկրատ եւ ինտելիգենտ դասակարգը շատ լաւ ճանաչում է հանգուցեալին։

Գալուստ քահանայ Աբուլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը ներկայումս ժողովում է տեղեկութիւններ այս տարվայ բերքի մասին։ Այդ տեղեկութիւնները կը մշակվեն այն տեղեկութիւնների հետ միասին, որոնք ստացված են զանազան պաշտօնական հիմնարկութիւնների մէջ։ Այդ մշակման գործով պէտք է զբաղվի ընկերութեան մէջ հիմնված վիճակագրական բիւրօն։

—

Մեզ հաղորդում են, որ նահանգական ինժեներ Բուտկեվիչ ուղեւորվեց Ախալքալաքի գաւառը ծանօթանալու տների չինութեան հարցի հետ երկրաշարժից վնասված գիւղերում։

—

«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, թէ իշխան Շախովսկոյ, ժամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչը, որ այժմ ճանապարհորդում է Ռուսաստանի ներքին նահանգներում ցենզուրական հաստատութիւնների գործերի հետ անձնականապէս ծանօթանալու համար, այցելելու է ի միջի այլոց եւ Թիֆլիս։

—

Առաջիկայ ուսումնական տարվանից զինուորական բժշկական ակադեմիայում սահմանվում են առանձին խորհրդակցութիւններ ակադեմիայի պրոֆեսօրների եւ ուսանողների մէջ այն հարցերի մասին, որոնք վերաբերում են ուսումնական գործին։ Այդ խորհրդակցութիւնները, որոնց ժամանակ ուսանողներին հնարաւորութիւն կը տրվի յայտնել իրանց ցանկութիւնները դասաւանդութեան վերաբերմամբ, կապ կը հաստատեն ուսանողների եւ ուսուցանողների մէջ։ Խորհրդակցութիւնները կը կազմվեն երեք պրոֆէսօրներից, որոնք դասախօսում են մի եւ նոյն կուրսում եւ նոյն կուրսի 6 ուսանողներից։ Այն հարցերը, որոնք ենթարկվել են խորհրդակցութիւնների քննութեանը, ապա կը զեկուցվեն ակադեմիայի պրոֆէսօրների ժողովին։ Խորհրդակցութիւնները կը հրաւիրվեն այն ժամանակ, երբ հարկաւոր համարվեն, թէ պրոֆէսօրների եւ թէ ուսանողների ցանկութեամբ։

—

Սպիրտի, ծխախոտի եւ դարեջրի ակցիզից ստացվում է 70 միլիոն եկամուտ. 40 միլիոն սպիրտից եւ օղուց, 26 միլիոն ծխախոտից, 1 միլիոն մախորկայից եւ 3 միլիոն դարեջրից։

—

ԵՐԵՒԱՆԻՑ Ներսէս քահանայ Վարդանեանց մեզ խնդրում է տպել հետեւեալը. «Անցեալ յուլիսի 23-ին Ազստաֆայից ատրախանցի մի քահանայի եւ բագուեցի մի ընտանիքի հետ Երեւան գնալիս վերցրինք срочный հանրակառքի տոմսակ մինչեւ Երեւան, վճարելով մարդագլուխ 7 ռուբլի։ Դիլիջանում կայարանի կառավարիչը պահանջեց մեր տոմսակները եւ յայտնեց, որ այդ տոմսակները ինքը պէտք է իր մօտ պահէ եւ փոխարէն նոր տոմսակներ տայ մեզ մինչեւ Երեւան։ Այդպէս էլ արինք։ Մի ժամից յետոյ կայարանի դրանը կանգնեց պատրաստ մի հանրակառք։ Որովհետեւ արդէն երեկոյեան ժամը 8 էր, կառավարիչը յայտնեց, որ եթէ ուզենանք՝ կարող ենք գիշերել հետեւեալ Սեմեոնովկա կայարանում։ Կէս գիշերվայ ժամը 1-ին հազիւ հասանք Սիմէօնովկա եւ վճռեցինք գիշերել այնտեղի կայարանում։ Սակայն կառապանը՝ փոխանակ կայարանի դրանը կանգնեցնելու հանրակառքը՝ քաշեց—անցաւ եւ յետոյ բացատրեց մեզ, որ նախ՝ մեզ կայարանում չեն ընդունի, որովհետեւ մենք ժամանաւոր հանրակառքով ենք գընում եւ երկրորդ՝ ինքը այդ գիւղում ձիեր չունի փոխելու։ Բանից դուրս է գալիս, որ Դիլիջանի կայարանի կառավարիչը պայմանաւորվում է մի ժալկանի հետ, ի հարկէ, իրան համար ձեռնտու պայմանով եւ մենք Դիլիջանից դուրս ենք գալիս ոչ թէ срочный հանրակառքով, որի համար տոմսակ էինք վերցրել մինչեւ Երեւան, այլ մի ժամանաւոր ժարդու պատկանեալ հանրակառքով։ Երեւանում մեզ յայտնեցին, որ այդ տեսակ խարդախութիւններ սովորական բաներ են մեր կողմի կայարանների կառավարիչների համար։ Աւելացնենք եւ այն, որ խարդախութիւնը բայվելուց յետոյ մինչեւ Երեւան մեզ ոչ մի կայարանում թոյլ չը տուին իջնել եւ բողոք գրել, չը նայելով որ մենք բացատրում ենք, որ срочный հանրակառքի տոմսակ ենք վերցրած եղել Ազստաֆայից մինչեւ Երեւան, առարկելով, որ մենք ժամանաւոր կառքով ենք գնում»։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են։ «Մշակի» № 154-ում հաղորդած լուրը Շուշուց՝ Բէնիկ վարդապետին այնտեղի թեմական դպրոցի տեսչ հրաւիրելու մասին, կատարելապէս ապշեցրեց մեզ։ Դեռ օգոստոսի սկզբներին այստեղացի բժիշկ Տատեան Շուշուց հեռագիր ստացաւ, որով հոգաբարձութիւնը, յանձին իր նախագահի, պաշտօնապէս առաջարկում էր նրան Շուշու թեմական դպրոցի տեսչի պաշտօնը։ Պ. Տատեան տուեց անմիջապէս իր համաձայնութիւնը։ Սակայն անցան շաբաթներ եւ ահա «Մշակի» մէջ կարդում ենք վերոյիշեալ լուրը։ Աւելացնենք սրան, որ Շուշու հոգաբարձութիւնը, պ. Տատեանի համաձայնութիւնը ստանալուց յետոյ, ինչքան մեզ յայտնի է, հարկաւոր չը համարեց նոյն իսկ որ եւ է տեղեկութիւն տալ յարգելի բժշկին»։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այս տարի անցեալ տարվայ ճիշդ հակապատկերն է ներկայացնում։ Անցեալ տարի տեղիս այգիներին ջուր մատակարարող գետակը դեռ մայիս ամսում ցամաքեց, որ չը տեսնված բան էր, իսկ այս տարի մինչեւ օրս էլ՝ բոլոր այգիներին ջուր բաշխելուց վերջը նա խառնվում է ետ-բասխ գետին, որ նոյնպէս չը տեսնված բան է։ Մինչեւ յուլիս ամսի վերջերը եղանակը շատ լաւ էր—անձրեւները, ինչպէս հարկն էր, գալիս էին, բայց յուլիսի վերջերում սկսվեցին տեղալ անընդհատ կերպով ու կարկտախառն։ Հացահատիկները, վաղուց քաղված լինելով, ազատվեցին կարկտից, բայց այգիների մի մասը եւ շրջակայ գիւղերից՝ Ղարաբաղի, Քերսի, Ղարավանքի բոլոր սեխի եւ ձմերուկի բոստանները ոչնչացան։ Իսկ անընդհատ անձրեւները չէր բղխում, այլ մի դրական եւ պարզ օրէնք էր, որ գործադրվում էր մահմեդական աշխարհում։ Քրիստոնեայ ընտանիքի մի անդամը, ընդունելով մահմեդականութիւն, դառնում էր այդ ընտանիքի բոլոր կալուածների միակ ժառանգը, իսկ քրիստոնեայ մնացողները զրկվում էին այդ կալուածքներին տիրելու իրաւունքից։ Մահմեդականութիւնը տարածելու նպատակով սրբագործված այս օրէնքը թոյլ էր տալիս եւ կամայականութիւններ ամենալայն չափերով։ Այսպէս, շատերը, մահմեդական դառնալով, կողոպտում էին բոլորովին հեռու, նոյն իսկ անծանօթ ընտանիքները, դառնալով նրանց կալուածների ժառանգ։ Այդ աւազակութիւնը շատ հեշտ միջոցով էր կատարվում. պէտք էր միայն գտնել մահմեդական վկաներ, որոնք դատաւորի առաջ հաստատէին, թէ ժառանգութիւն որոնողը իր ցոյց տուած ընտանիքի հետ բարեկամութիւն ունի։ Իսլամ վկայի դէմ, ինչպէս յայտնի է, չէր ընդունվում քրիստոնեայի վկայութիւնը, ուստի եւ հայերը միշտ տանուլ էին տալիս այդ աչկարաց արդար գործերը եւ մահմեդականացած հայը շատ անգամ տիրանում էր մեռած ազգականի ոչ միայն կայքին, այլ եւ ընտանիքին, յափշտակում էր նրա երեխաներին, կնոջը եւ դարձնում էր ամենքին մահմեդական *)։

Դժբախտ քրիստոնեան, իր երեխաների համար մի կտոր կալուածք, մի կտոր հաց թողնելու հոգսից տանջվելով, դիմում էր յուսահատական միջոցների։ Նա կտակում էր իր կալուածքը մի մահմեդականի, որպէս զի իր մահմեդականացած ազգականը ժառանգ չը հանդիսանայ, իսկ կտակով կալուածի տէր դարձող մահմեդականը պարտաւորվում էր իր կողմից կալուածը տալ կտակողի զաւակներին։ Բայց սա մի շատ վտանգաւոր միջոց էր, որին կարող էր դիմել միայն անճարութեան ծայրին տեւ մենք ժամանաւոր հանրակառքով ենք գընում եւ երկրորդ՝ ինքը այդ գիւղում ձիեր չունի փոխելու։ Բանից դուրս է գալիս, որ Դիլիջանի կայարանի կառավարիչը պայմանաւորվում է մի ժալկանի հետ, ի հարկէ, իրան համար ձեռնտու պայմանով եւ մենք Դիլիջանից դուրս ենք գալիս ոչ թէ срочный հանրակառքով, որի համար տոմսակ էինք վերցրել մինչեւ Երեւան, այլ մի ժամանաւոր ժարդու պատկանեալ հանրակառքով։ Երեւանում մեզ յայտնեցին, որ այդ տեսակ խարդախութիւններ սովորական բաներ են մեր կողմի կայարանների կառավարիչների համար։ Աւելացնենք եւ այն, որ խարդախութիւնը բայվելուց յետոյ մինչեւ Երեւան մեզ ոչ մի կայարանում թոյլ չը տուին իջնել եւ բողոք գրել, չը նայելով որ մենք բացատրում ենք, որ срочный հանրակառքի տոմսակ ենք վերցրած եղել Ազստաֆայից մինչեւ Երեւան, առարկելով, որ մենք ժամանաւոր կառքով ենք գնում»։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են։ «Մշակի» № 154-ում հաղորդած լուրը Շուշուց՝ Բէնիկ վարդապետին այնտեղի թեմական դպրոցի տեսչ հրաւիրելու մասին, կատարելապէս ապշեցրեց մեզ։ Դեռ օգոստոսի սկզբներին այստեղացի բժիշկ Տատեան Շուշուց հեռագիր ստացաւ, որով հոգաբարձութիւնը, յանձին իր նախագահի, պաշտօնապէս առաջարկում էր նրան Շուշու թեմական դպրոցի տեսչի պաշտօնը։ Պ. Տատեան տուեց անմիջապէս իր համաձայնութիւնը։ Սակայն անցան շաբաթներ եւ ահա «Մշակի» մէջ կարդում ենք վերոյիշեալ լուրը։ Աւելացնենք սրան, որ Շուշու հոգաբարձութիւնը, պ. Տատեանի համաձայնութիւնը ստանալուց յետոյ, ինչքան մեզ յայտնի է, հարկաւոր չը համարեց նոյն իսկ որ եւ է տեղեկութիւն տալ յարգելի բժշկին»։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այս տարի անցեալ տարվայ ճիշդ հակապատկերն է ներկայացնում։ Անցեալ տարի տեղիս այգիներին ջուր մատակարարող գետակը դեռ մայիս ամսում ցամաքեց, որ չը տեսնված բան էր, իսկ այս տարի մինչեւ օրս էլ՝ բոլոր այգիներին ջուր բաշխելուց վերջը նա խառնվում է ետ-բասխ գետին, որ նոյնպէս չը տեսնված բան է։ Մինչեւ յուլիս ամսի վերջերը եղանակը շատ լաւ էր—անձրեւները, ինչպէս հարկն էր, գալիս էին, բայց յուլիսի վերջերում սկսվեցին տեղալ անընդհատ կերպով ու կարկտախառն։ Հացահատիկները, վաղուց քաղված լինելով, ազատվեցին կարկտից, բայց այգիների մի մասը եւ շրջակայ գիւղերից՝ Ղարաբաղի, Քերսի, Ղարավանքի բոլոր սեխի եւ ձմերուկի բոստանները ոչնչացան։ Իսկ անընդհատ անձրեւ-

---

այնպէս համարեցին թէ նա մեռել է եւ քարշ տալով՝ թաղեցին աղբակոյտի մէջ»։ Այսպէս եւ ուրիշներին։ Բարսեղ եւ Ղազար անունով մարդկանց քսան եղունգները (ձեռքերի եւ ոտների) հանեցին. մի ուրիշին կախեցին մի ձեռքից ու այնքան ծեծեցին, որ մարմնի յօդերը խախտվեցան։ Այս բոլորից յետոյ, ինչ խօսք, սարսափ տիրեց ամբողջ գիւղի վրա եւ նոյն իսկ կաթնակեր երեխաներին էլ հանեցին բարբարոս հարկահանի առաջ։ Եւ ահա թէ Ասլան աղան որպէսի իմաստութեամբ էր վճռում թէ ով է հարկատու։ Երբ նրա առջեւը եկողը ծեր մարդ էր, նա հրամայում էր նրան յետ ու առաջ գնալ. եթէ ծերը գլուխը կորացրած էր պահում եւ երկու ձեռքերը ետեւից էր տանում, նա ազատվում էր հարկից. իսկ եթէ գլուխը բարձր էր պահում եւ ձեռքերը առջեւից էր տանում, հարկատու էր գրվում։ Մանուկների հարկատուական կարողութիւնը որոշվում էր այսպէս։ Հարկահանը թել էր անցկացնում երեխայի պարանոցի շուրջը եւ ապա թելի երկու ծայրերը գնում էր նրա բերանում ու հրամայում էր ատամներով բռնել ծայրերը. այս դրութեան մէջ եթէ թելի օղը անցնում էր երեխայի գլխով, նա, ուրեմն, ազատ էր հարկից, իսկ եթէ չէր անցնում, նշանակում էր, որ նա խանի հարկատու հպատակն է։ Եւ այս կերպով Ասլան աղան ցուցակագրեց եւ հարկի ենթարկեց ամեն ինչ, որ կայ գիւղում—մարդ, կով, ձի, ջորի, էշ, ոչխար, ջրաղաց, ձիթաղաց, բրնձաղաց, արհեստներ, այգի, պարտէզ։

Մարդկային հօտի այն տեսարանը հարկահանի առաջ—դեռ հասկանալի էր։ Դեռ իսլամի հիմնադիր Մուհամմէդն էր սահմանել այսպիսի կարգ անհաւատների համար. ով զէնքով դիմադրում էր մուսիմաններին, նա պիտի սպանվեր, իսկ ով յօժար կամքով հպատակվում էր նրանց, նա իրաւունք ունէր ապրել եւ մնալ իր կրօնի մէջ միայն այն պայմանով, որ դրա համար գլխահարկ տայ։ Դա դաշնադրութիւն էր մուսիմանի եւ անհաւատի մէջ. քանի որ անհաւատը վճարում էր գլխահարկը, մուսիմանը իրաւունք էր տալիս նրան ապրելու. իսկ եթէ նա անհաւատարիմ էր գտնվում եւ հարկը չէր վճարում, այն ժամանակ մուսիմանի եւ նրա մէջ կայացած դաշնագիրը ոչընչացած էր համարվում, այսինքն մուսիմանը այլ եւս պարտաւոր չէր ապրելու իրաւունք շնորհել անհաւատին։ Այս պարզ կարգը, սակայն, սրբութեամբ չէր պահպանվում մուսիմանների կողմից։ Եւ քրիստոնեաները շատ անգամ էին հարկադրված լինում դիմել շահերին եւ սուլթաններին, աղերսելով իրանց համար արտօնութիւններ։ Աչքի անցկացնելով բարձրագոյն իշխանութեան տուած զանազան արտօնագրերը, մենք տեսնում ենք, որ հայերը յաճախ ստիպված են եղել իրանց տարրական իրաւունքներն անգամ պաշտպանել աղերսագրերով։ Այսպէս, փոքր Շահ-Աբասի մի հրովարտակը իրաւունք է տալիս հայերին ունենալ անշարժ կայքեր եւ հրամայում է մահմեդականներին չը բռնանալ այդ իրաւունքի վրա։ Շատ են մանաւանդ հրամաններ, որոնք թոյլ են տալիս հայերին կատարել իրանց կրօնական արարողութիւնները։ Այդ թոյլատրութիւնները հիմնված են հայերի այն զանգատների վրա, թէ մահմեդականները արգելում են զանգակ խփել, հանդէսով մեռելաթաղ կատարել, քանդված եկեղեցիները նորոգել եւ այլն։

Դժուար էր մանաւանդ պահպանել կալուածատիրական իրաւունքները։ Մի քանի հրովարտակներ խօսում են այն մասին, որ մահմեդականացած հայերը իրաւունք չունեն խլել իրանց քրիստոնեայ ազգականներից նրանց կալուածները *)։ Բայց այս կարգը քմահաճութիւններից չէր ազատում, այլ մի դրական եւ պարզ օրէնք էր, որ գործադրվում էր մահմեդական աշխարհում։ Քրիստոնեայ ընտանիքի մի անդամը, ընդունելով մահմեդականութիւն, դառնում էր այդ ընտանիքի բոլոր կալուածների միակ ժառանգը, իսկ քրիստոնեայ մնացողները զրկվում էին այդ կալուածքներին տիրելու իրաւունքից։ Մահմեդականութիւնը տարածելու նպատակով սրբագործված այս օրէնքը թոյլ էր տալիս եւ կամայականութիւններ ամենալայն չափերով։ Այսպէս, շատերը, մահմեդական դառնալով, կողոպտում էին բոլորովին հեռու, նոյն իսկ անծանօթ ընտանիքները, դառնալով նրանց կալուածների ժառանգ։ Այդ աւազակութիւնը շատ հեշտ միջոցով էր կատարվում. պէտք էր միայն գտնել մահմեդական վկաներ, որոնք դատաւորի առաջ հաստատէին, թէ ժառանգութիւն որոնողը իր ցոյց տուած ընտանիքի հետ բարեկամութիւն ունի։ Իսլամ վկայի դէմ, ինչպէս յայտնի է, չէր ընդունվում քրիստոնեայի վկայութիւնը, ուստի եւ հայերը միշտ տանուլ էին տալիս այդ աչկարաց արդար գործերը եւ մահմեդականացած հայը շատ անգամ տիրանում էր մեռած ազգականի ոչ միայն կայքին, այլ եւ ընտանիքին, յափշտակում էր նրա երեխաներին, կնոջը եւ դարձնում էր ամենքին մահմեդական *)։

Դժբախտ քրիստոնեան, իր երեխաների համար մի կտոր կալուածք, մի կտոր հաց թողնելու հոգսից տանջվելով, դիմում էր յուսահատական միջոցների։ Նա կտակում էր իր կալուածքը մի մահմեդականի, որպէս զի իր մահմեդականացած ազգականը ժառանգ չը հանդիսանայ, իսկ կտակով կալուածի տէր դարձող մահմեդականը պարտաւորվում էր իր կողմից կալուածը տալ կտակողի զաւակներին։ Բայց սա մի շատ վտանգաւոր միջոց էր, որին կարող էր դիմել միայն անճարութեան ծայրին հասած քրիստոնեան։ Նշանաւոր է, որ փրկութեան այս ճանապարհը քրիստոնեաներին ցոյց տուողները մահմեդական թուրքերն էին։ Այս փաստը մի աւելորդ անգամ էլ վկայում է, որ մահմեդական հայը աւելի անգութ էր իր ազգակիցների վերաբերմամբ, քան բուն մահմեդականները. սա մի հանրածանօթ իրողութիւն էր, միանման մահմեդական աշխարհի բոլոր անկիւններում—թէ Բալկանեան թերակղզու վրա, ալբանացիների, յոյների, բոլգարների մէջ եւ թէ, օրինակ, Նոր Զուղայում կամ Քանաքեռ գիւղում, հայերի մէջ։ Իսլամը չէր կարող աւելի անգութ զէնք ու պատուհաս հնարել իր թշնամի քրիստոնէութեան դէմ, քան այս անչափ ֆանատիկոս, դաժան ու անողորմ նորադարձները։

Եւ խօսելով մահմեդականացած քրիստոնեաների մասին, մենք չը պիտի կարծենք, թէ դրանք անհատական երեւոյթներ էին կազմում։ Ընդհակառակը, XVII դարը քրիստոնէութեան ճգնաժամն էր մահմեդական Արեւելքում։ Յոյները, ալբանացիները, սերբերը, բոլգարները խմբերով էին դիմում իսլամի գիրկը. ամբողջ գաւառներ գլխովին մահմեդականանում էին։ Հայերի մասին կցկտուր տեղեկութիւններ են մնացել, բայց դրանք էլ բաւական են ցոյց տալու համար, որ նրանց մէջ էլ տեղի ունէր նոյն կրօնափոխական շարժումը։ Առհասարակ, իսլամը այնքան յաղթական ընթացք էր բռնել, որ XVII դարի վերջերում արդէն թւում էր, թէ քրիստոնէութիւնը Արեւելքում դատապարտված է անդառնալի եւ վերջնական կորստի *)։

(Ի՞նչ շարունակվի)

*) Սիմէոն կաթողիկոս—«Ջամբռ», Վաղարշապատ, 1873, եր. 214—221։

*) Առաքել պատմագիր, Գլ. Ե.

*) Гервинусъ „Исторія девятнадцатаго вѣка“, СПБ., 1868, т. V, стр. 171.

ները ոչ միայն արգելեցին հացահատիկների կալսելը, այլ եւ իրանց հեղեղներով շատ վնասներ հասցրին։ Ղարաբաղ գիւղում երկու 12 տարեկան երեխաներ տաւար արածացնելու ժամանակ զոհ գնացին հեղեղին։ Սակայն օգոստոսի 12-ից սկսած անձրեւները դադարել են, ուստի գիւղացիները, մոռանալով անցեալը, օր ու գիշեր, առանց դադար առնելու, կալում կալսում են»։

—

Երեւանի նահանգի ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱ գիւղից մեզ գրում են. «Նորերս մեր մասի պրիստաւը յայտնեց մեր գիւղացիներին, որ տարրական դպրոցի շինութիւնը պատրաստ կը լինի գարնան, իսկ մինչ այն առաջիկայ սեպտեմբերի 1-ից դասաւանութիւնը կը կատարվի մասնաւոր շինութեան մէջ»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում. «Մոայլ երկինք, թխպոտ ամպեր, յորդ անձրեւ, կարկուտ ու փոթորիկ՝ ահա 1900 թւի ամառվայ առանձնայատկութիւնները Երեւանի նահանգի բոլոր մասերում, որ եւս աւելի ցաւալի է, որովհետեւ բերքը այս տարի շատ առատ է եւ կարելի էր յուսալ, որ մի շարք անբերրի տարիներից յետոյ ժողովրդի աչքը վերջապէս կը լիանայ։ Անընդհատ տեղացող անձրեւները միանգամից կանգնեցրել են հունձն ու կալսելը։ Դաշտերում հնձած ցորենը մնում է դիզած կալատեղերում, կիսածեծ «գօշամէն» եւ ծեծած, բայց չը մաքրած «թեղը» սկսում է ծլել։ Սարերում անձրեւը նոյն իսկ ժամանակ չէ տալիս հնձելու հասած ցորենի արտը, որի փարթամ հասկերը, քամիների եւ անձրեւի տարափների ազդեցութիւնից՝ միմեանց վրա են պառկել։ Այդ է պատճառը, որ ցորենի գինն օրէցօր ընկնելու փոխարէն մի ամսվայ ընթացքում 26—30 ռուբլուց չէ իջնում։ Անձրեւների պատճառով եղանակները շատ հով են անցնում եւ այս տարի դժուար թէ խաղողը կանոնաւոր հասունանայ։ Երկիւղ են կրում, որ բամբակը նոյնպէս խակ մնայ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

«Новости» լրագրին գրում են Լօնդօնից. «Չը նայելով, որ Պեկինի գրաւումից արդէն երկու շաբաթ է անցել, բայց դեռ եւս Երկնային կայսրութեան մայրաքաղաքից, առաջվայ նման, չափազանց քիչ, թերի եւ անորոշ տեղեկութիւններ են ստացվում։ Այս հանգամանքը, բնականաբար, վատ տպաւորութիւն է թողնում հասարակութեան վրա եւ շատերի մէջ կասկած է ծնեցնում, թէ մի գուցէ օտարերկրացիները եւ նոյն իսկ դաշնակից զօրքերը որ եւ է վտանգի հանդիպած լինեն Պեկինում։ Սակայն, ինչպէս ես տեղեկացայ բոլորովին վստահելի անձերից, այդ կասկածներն անհիմն են, որովհետեւ Պեկինի գրաւումից յետոյ տիրող համեմատական հանգարտութիւնը ամենեւին կապ չունի դրութեան վտանգաւորութեան հետ Պեկինում։

«Բանն այն է, որ պետութիւնները, որոնք բոլոր էական կէտերում համաձայն են միմեանց հետ, չեն կարողանում համաձայնվել մի հարցի վերաբերմամբ—համարել արդեօք Լի-Խունգ-Զանգին վստահելի անձնաւորութիւն թէ ոչ։ Ինչպէս յայտնի է, Լի-Խունգ-Զանգ, դեռ Պեկինի առումից առաջ, չինական կառավարութեան կողմից նշանակված էր արտակարգ միներ եւ լիազօր՝ խաղաղութեան բանակցութիւններ վարելու պետութիւնների հետ։ Պետութիւնները, որոնց տեղեկութիւն էր տուած այդ մասին, իր ժամանակին միաձայն պատասխանեցին չինական կառավարութեան, որ նրանք ձեռնամուխ չեն լինի բանակցութիւնների՝ մինչեւ որ դեսպանները չաղատվեն եւ հնարաւորութիւն չը ստանան անմիջական հաղորդակցութիւն սկսել իրանց կառավարութիւնների հետ։

«Երբ դաշնակից զօրքերը առան Պեկին եւ դեսպանները ազատվեցին, Լի-Խունգ-Զանգին թուաց, թէ հասել է բանակցութիւններ սկսելու յարմար բոպէն։ Նա Շանղհայից անմիջապէս տեղափոխվեց Տակու՝ յուսալով, որ այնտեղ, զօրապետների միջոցով, կաջողվի նրան բանակցութիւններ սկսել։ Բայց այնտեղ զօրապետները բոլորովին անուշադիր թողին նրա առաջարկութիւնները։ Զինացի դիւանագէտը այնուհետեւ ուղեւորվեց Պեկին, սակայն Պեկինում եւս նա հանդիպեց լիակատար անտարբերութեան եւրօպական պետութիւնների ներկայացուցիչների կողմից։

«Ինչպէս երեւում է հիմա, փոփոխութիւնը պետութիւնների վերաբերմունքի մէջ դէպի Լի-Խունգ-Զանգ տեղի է ունեցել Գերմանիայի պահանջմամբ։ Կոմս Վալդերզէէին եւրոպական զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակելուց յետոյ Զժիլիի նահանգում՝ Գերմանիան բացարձակաբար յայտնեց, թէ նա Լի-Խունգ-Զանգին համարում է խորամանկ, նենգամիտ եւ եւրոպական պետութիւնների հաւատին անարժան մարդ, ուստի եւ մերժեց նրա հետ որ եւ է բանակցութիւն սկսելու միտքը։ Միւս պետութիւնները, ինչպէս Եապոնիան եւ Միացեալ-Նահանգները, ընդհակառակը յայտնեցին իրանց պատրաստականութիւնը ընդունելու Լի-Խունգ-Զանգին չինական կառավարութեան լիազօր եւ բանակցութիւններ սկսելու նրա հետ։

«Լօնդօնի քաղաքական շրջաններում այն կարծիքի են, թէ Գերմանիան չէ ցանկանում բանակցութիւններ սկսել չինացիների հետ, մինչեւ որ կոմս Վալդերզէէն չը գնայ Պեկին եւ շատ ուրախ կը լինի, եթէ կարողանայ հնարաւորութիւն տալ իր ֆէլդմարշալին մեծ-մեծ խօսքերից անցնելու մեծ-մեծ գործերի»։ Իրբեւ եզրակացութիւն թղթակիցը հաւատացնում է, որ բոլոր պետութիւնների մէջ, որոնք մասնակցում են չինական ներկայ արշաւանքին, բացի Լի-Խունգ-Զանգին վերաբերեալ կէտից, մնացած բոլոր կէտերում կատարեալ համաձայնութիւն է տիրում։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

Ֆիլադէլֆիա, յուլիսի 10/23-ին

Ամերիկայի նախագահի ընտրութեան ժամանակամիջոցը, որ չորս տարի է, լրանալու վրա է։ Ժողովուրդը սկսած է հետզհետէ յուզվել. 70 միլիոն ժողովրդի միջից մի նախագահ ընտրելը այնքան հեշտ բան չէ, բայց պահանջը բերել միայրել է այդ միլիոնաւոր մարդկանց մի քանի կուսակցութիւնների մէջ, որոնք, նախապէս ընտրելով իրանց թեկնածուն, հեշտացնում են մասսայի գործը. նրան միայն մնում է ընտրութեան ժամանակ գնալ ձգել իր քուէն այն կուսակցութեան թեկնածուին, որին ինքը պատկանում է, եւ վերադառնալ։

Նորերս իւրաքանչիւր կուսակցութիւն ունեցաւ իր ազգային համագումար ժողովը եւ ընտրեց թեկնածուներ նախագահութեան եւ փոխ-նախագահութեան համար։ Հետաքրքրական է նրանց կազմակերպութիւնը։

Իւրաքանչիւր կուսակցութիւն ունի իր ազգային համաժողովի անդամները, որոնք կոչվում են Ազգային կոմիտէ եւ որոնք նահանգներից ընտրված ներկայացուցիչներն են։ Ժողովի գործադիր անդամները՝ ատենապետ, քարտուղար, գանձապետ եւ այլն ընտրվում են ժողովի մէջ եւ նրանց պարտականութիւնն է կառավարել նախագահական մրցումը, միջոցներ հայթայթել, խօսողներ, լաւ պրոպագանդիստներ վարձել, իրանց նպատակին օգտակար եղող գրականութիւն տարածել ժողովրդի մէջ։

Ժողովը տեղի է ունենում մի որ եւ է մեծ քաղաքում, ուր հազարաւոր մարդիկ տեղաւորող ժողովարան են պատրաստում։ Ֆիլադելֆիայի մէջ եղած ժողովարանը 15,000-ից աւելի մարդ տեղաւորեց։ Տեղերը երբեմն ծախվում են խիստ թանգ գնով,—մինչեւ 50 դօլար (100 ր.) մի տեղի համար փող վճարվեց այդ վերջին ժողովի մէջ։

Ամեն մի փոքրիկ բանի համար առանձին կոմիտէ է նշանակվում, որպէս զի եկողներին հարկ եղած հեշտութիւնները տրվի. օրինակ, երաժիշտներին, քաղաքը զարդարելու, հիւրերին ընդունելու համար եւ այլն։

Իւրաքանչիւր նահանգ ուղարկում է քուէարկողների թւի համեմատ ներկայացուցիչներ։ Նախորդ ազգային ժողովի ատենապետը բաց է անում ժողովը եւ կարդում բոլոր ներկայացուցիչների անունները։ Յետոյ մի հոգեւորական աղօթում է, որից յետոյ առաջարկութիւններ են լինում, թէ արդեօք ժողովը չարունակվի նախընթաց կանոնի համեմատ, թէ փոփոխութեան ենթարկվի։

Ամերիկական գլխաւոր կուսակցութիւններից հասարակապետականը երբեմն փոխում է իր կանոնը, իսկ ռամկապետականը երբէք,—այդ կուսակցութիւնը իր սկզբնաւորութեան օրից ժողովի ժամանակ միշտ կառավարվում է մի եւ նոյն պատմական դարձած կանոնագրքով։ Ժողովի առաջին օրվայ գործն է ընտրել անդամներ տարբեր յանձնախմբերի համար։ Նոր ատենապետը, երբ ընտրվում է, պարտաւոր է ճառ ասել, որ պէտք է ազդու կերպով գծէ կուսակցութեան ապագայ բռնած ընթացքը կամ, ինչպէս իրանք ասում են, հաստատէ ընտրական պլատֆորմը։

Այնուհետեւ գալիս է ժողովի գլխաւոր խընդիրը, թէ ովքեր պիտի լինեն իրանց ընտրելիները իբրեւ նախագահ եւ փոխ-նախագահ Միացեալ Նահանգների համար։ Իւրաքանչիւր նահանգի ներկայացուցիչները կարող են եւ իրաւունք ունեն ներկայացնելու մի ընտրելի. բայց նախապէս այդ խնդիրը այնքան ծեծվում է, որ շատ քիչ անգամ է պատահել, որ ամեն մի նահանգ ներկայացնէ մի-մի ընտրելի։ Ընդհանրապէս պարագլուխները ժողովից դուրս համաձայնութեան են գալիս եւ խնդիրը ծանրանում է միայն 4—5-ի վրա։ Ֆիլադելֆիայի ժողովի մի քանի ղեկավարները երկար պայքարից յետոյ համաձայնութեան եկան առաջարկելու Մէքինլիին (ներկայ նախագահին) իբրեւ նախագահ եւ Ռոզվելտին իբրեւ փոխ-նախագահ, որոնք եւ ընդունվեցին միաձայնութեամբ, առանց մի որ եւ է հակառակորդի։ Այստեղ պիտի յիշենք, որ Ռոզվելտը, իբրեւ հերոս սպանօ-ամերիկեան պատերազմի, վերին աստիճանի ժողովրդականութիւն է վայելում, ուստի զարմանալի չէր, որ թէ ներկայացուցիչների եւ թէ ժողովրդի կողմից ընդունվեց ցոյցերով, գոռում-գոչումով։

Թեկնածուի առաջարկողն երկար ճառախօսում է եւ հանդիսաւորական կերպով ցոյց է տալիս առաջարկվածի արժանիքը։ Այդ առաջարկութիւնը երկրորդում, երրորդում են եւ ուրիշները, որոնք կարող են նոյնպէս ճառախօսել։

Երբ քուէարկութիւնը սկսվում է, նահանգների անունները մի առ մի կարդացվում են եւ քուէները առնվում։ Այդ շատ անգամ խիստ յոգնեցուցիչ է լինում, որովհետեւ շատ քիչ է պատահում, որ մի անգամ քուէարկելուց յետոյ ընտրութիւնը աջողվի, առհասարակ ստիպված են լինում նորից ու նորից կրկնել այդ պրօցէսը։ Իւրաքանչիւր նահանգի ներկայացուցիչների ատենապետը, անունը կանչելիս, վեր է կենում եւ պաշտօնական կերպով ներկայացնում է իր ընկերների քուէն, որը կարող է եւ բաժանված լինել զանազան թեկնածուների մէջ։

Երբեմն թեկնածուի ընտրութեան համար հարկ եղած քուէները չեն ստացվում, ուստի քուէարկութիւնը չարունակվում է մի կամ երկու օր, որի ընթացքում պրօպագանդա է լինում քուէներ շահելու համար. բայց երբ ոչ մի կողմը չէ շահում կամ չէ զիջանում միւսին, մի նոր «Սեւ ձի» (Block horse) թեկնածու են առաջարկում, որ ոչ մի կուսակցութեան չէ պատկանում եւ չէզոքութեան պատճառով հեշտութեամբ ընտրվում է։ Մի քանի նախագահներ այդպէս «Սեւ ձի» առաջարկվելով են ընտրվել։

Ժողովի ընտրած երկու թեկնածուները (նախագահ եւ փոխ-նախագահը) այնուհետեւ ճանաչվում են իբրեւ կուսակցութեան դրօշը կրողներ եւ բոլոր անդամների պարտականութիւնն է պատել այդ դրօշը, հաւաքվել նրա շուրջը եւ պաշտպանել նրան մինչեւ մահ կամ թէ մինչեւ փառաւոր յաղթութիւն։

Ներկայացուցիչները, վերադառնալով իրանց տեղերը, պահում են իրանց հետ այն եռանդը ու ազդեցութիւնը, որոնք ընդհանրապէս հետեւանք են լինում այդպիսի ժողովների։ Ազգային ժողովում պատրաստած կուսի տակտիկի համաձայն նրանք զարմանալի կերպով ծովից մինչեւ ծով կառավարում են ու ղեկավարում ընտրական պայքարը։ Առեւտուրը ժամանակաւորապէս, մինչեւ նախագահի ընտրութիւնը, խանգարվում է։ Հազարաւոր խօսողներ քաղաքից քաղաք պտտելով պրոպագանդա են անում, անթիւ յօդուածներ, բրոշիւրներ, նոյն իսկ գրքեր են ցրվում ժողովրդի մէջ, ցոյց են տալիս նրան, թէ ինչպէս եւ ում պէտք է քուէարկել։ Միլիոնաւոր դօլարներ են ծախսվում մարքեր փոխելու համար եւ այլն։

Նոյեմբերին քուէարկողը մօտենում է յատուկ պատրաստված տեղերում քուէարկղերին եւ ձգում իր քուէն ու հեռանում։ Մի քանի ժամից յետոյ ամբողջ աշխարհը իմանում է, թէ ով պիտի լինի Ամերիկայի 70,000,000 ժողովրդի կառավարիչը։ Այդ ժամանակ ժողովրդի մի մասը հանդէսներ է սարքում, ցնծում է իր յաղթութեան վրա, մինչդեռ միւս մասը սրտակոտոր, գլուխը կոր հեռանում է եւ սկսում ծրագիրներ պատրաստել հետեւեալ ընտրութեան համար։

Այս տարի, ինչպէս երեւում է, հասարակապետականները պիտի յաղթեն, եւ Մէքինլին պիտի վերընտրվի։ Երկու գլխաւոր կուսակցութիւնների մէջ եղած հիմնական բանակռիւը այս տարի կայանում է Ամերիկայի տիրապետութիւնը հեռաւոր երկիրներում տարածելու եւ չը տարածելու վրա։ Հասարակապետականների բռնած ընթացքը յայտնի է ներկայ կառավարութեան քայլերից։ Դրանք ցանկանում են, որ Ֆիլիպեան կղզիները եւ Պօրտօրիկօն ճանաչվեն իբրեւ Ամերիկայի գաղութներ, պնդելով՝ թէ նրանք անկարող են իրանք իրանց կառավարելու։ Դրանք «իմպերիալիզմի» կուսակիցներ են։ Ռամկապետականները, ընդհակառակը, խիստ հակառակ են իրանց պետութեան տարածման, ընդարձակման։ Նրանք ցանկանում են, որ վերոյիշեալ կղզիներին անկախութիւն, ինքնավարութիւն տրվի։ Նրանց նշանաբանն է՝ «Ամերիկան ամերիկացիների համար» եւ թեկնածուն է Բրայանը։

Ե. Տէր-Սարգսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Berliner Tageblatt» լրագրին հաղորդում են Հռօմից, թէ բոլոր պապական դեսպանները ստացան կարդինալ Ռամպօլլայից շրջաբերական հրաման, որով պատուիրվում է նրանց առ ոչինչ համարել Վիկտոր-Էմմանուէլ թագաւորի գահակալութիւնը, որովհետեւ Վատիկանը պաշտօնական տեղեկութիւն չէ ստացել ոչ այդ եւ ոչ Ումբերտօ թագաւորի մահվան մասին։ «Երեւում է, նկատում է «Tageblatt»-ի թղթակիցը, որ Վատիկանի եւ Կվիրինալի յարաբերութիւնները կը մնան նոյն դրութեան մէջ Վիկտոր-Էմմանուէլի թագաւորութեան օրով, որպիսի դրութեան մէջ էին նրանք Ումբերտոյի օրով եւ օպտիմիստների վաղաժամ գուշակութիւնները դեռ շատ հեռու են իրագործվելուց»։

—Պետութիւնների մէջ ներկայումս կարծիքների փոխանակութիւն է կատարվում անիշխանականների դէմ նոր եւ աւելի խիստ միջոցներ ձեռք առնելու վերաբերմամբ։ Եւրօպական մամուլը այժմ եռանդով քննադատում է այդ հարցը։ Հետաքրքրականն այն է, որ մինչեւ այժմ անիշխանականների դէմ ուղղված կուին անհամակիր Շվեյցարիան, հիմա, «National Zeitung»-ի ասելով, լիակատար պատրաստականութիւն է յայտնում աջակցելու միւս պետութիւններին՝ նրանց սկսած արշաւանքի մէջ ընդդէմ անիշխանականների։ Ցիչված լրագրի թղթակիցը հաւատացնում է, թէ շվեյցարացիների կարծիքով՝ անիշխանականները ոչ թէ քաղաքական յանցաւորներ են, այլ հասարակ մարդասպաններ, որոնց անհրաժեշտ է հալածել ամեն տեսակ միջոցներով։ Շվեյցարիան չէ կամենում փակել իր դռները քաղաքական փախստականների առաջ, բայց նա չէ կամենում մի եւ նոյն ժամանակ իր երկիրը դարձնել անիշխանականների բոյն եւ ապաստան նրանց համար։

—Բ. Դուռը բումինական կառավարութեան յայտագրին տուած պատասխանի մէջ յայտնում է, թէ նա, առհասարակ, իր համար կանոն է դրել չը խառնվել բոլգարական իշխանութեան ներքին գործերի մէջ, բայց այս անգամ, ի նկատ առնելով իր գերագոյն իրաւունքները Բոլգարիայի վերաբերմամբ, հարկաւոր համարեց յիշեցնել իր վասալի կառավարութեանը, որ Բոլգարիան անկանոն գործողութիւններ է թոյլ տալիս իրան Բումինիայի վերաբերմամբ եւ պահանջել մի եւ նոյն ժամանակ, որ իշխանութեան կառավարութիւնը միջոցներ ձեռք առնի բումինո-բոլգարական ընդհարման առաջն առնելու համար։

—«Россія» լրագրին հեռագրում են Լօնդօնից, թէ նոյեմբերի 1-ին, երբ անգլիական զօրքի այժմեան գլխաւոր հրամանատար Ուօլսլէյ անցնում է հասակի այն սահմանից, երբ օրէնքով ոչ մի գեներալ այլ եւս չէ կարող մնալ իսկական ծառայութեան մէջ, նրա փոխարէն գլխաւոր հրամանատար կը նշանակվի գեներալ Բօբերտս։

—Շատ անգամ ունգարական մինիստր-նախագահ Սէլլիի հետ խորհրդակցելուց եւ կայսրին զեկուցումներ ներկայացնելուց յետոյ՝ աւստրիական մինիստր-նախագահ Կեօրբէր վճռեց, վերջապէս, բանակցութիւններ սկսել բէյխսրատի զանազան կուսակցութիւնների եւ մասնաւորապէս չեխերի հետ օբստրուկցիայի դադարեցման եւ լեզուների հարցի մասին։ Չեխական կուսակցութեան գործադիր յանձնաժողովը իր կողմից լիազօրութիւն տուեց բանակցութիւններ վարելու Պաչակին եւ Ստրանսկուն, նախկին մինիստր Կայցլին, պատգամաւորների ժողովի նախկին փոխ-նախագահներ Կրամարժին եւ Զաչակին, նոյնպէս եւ կուսակցութեան ղեկավար Հերօլդին։ Կարծում են, որ բանակցութիւնները ցանկալի հետեւանքը չեն ունենայ եւ որ ներկայ պայմաններում ոչ մի տեւական համաձայնութիւն չէ կարող տեղի ունենալ գերմանացիների եւ չեխերի մէջ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

21 օգոստոսի

ՊԱՐԻԶ։ Իշխան Ուրուսով Թագաւոր Կայսրից յանձնարարութիւն ստացաւ տալու Լուբէյին Անդրէյ նախակոչի չքանշանը Կայսրի ձեռագիր նամակի հետ միասին։

ՆԻՒ-ԻՕՐԿ։ Վաշինգտոնից հաղորդում են, թէ հինգ պետութիւններ համաձայնվեցին Ռուսաստանի առաջարկութեան՝ միջազգային զօրքերը Պեկինից հեռացնելու վերաբերմամբ։ Երկու պետութիւն—Գերմանիան եւ Իտալիան, չընդունեցին առաջարկութիւնը։ Այդ պետութիւնները կարծում են, որ Լի-Խունգ-Զանգի լիազօրութիւնները բաւարար չեն։ Ֆրանսիան, առաջ քան բանակցութիւններ սկսելը, ցանկանում է, որ Լի-Խունգ-Զանգի լիազօրութիւնները պարզվեն, բայց ենթադրում է, որ կը համաձայնվի Միացեալ Նահանգների, Անգլիայի, Ռուսաստանի եւ Եապոնիայի հետ։ Կարծում են, որ Գերմանիան եւ Իտալիան, ի նկատ առնելով հինգ պետութիւնների համաձայնութիւնը միմեանց հետ, հարկադրված կը լինեն հեռացնել իրանց զօրքերը Պեկինից եւ բանակցութիւններ սկսել Չինաստանի հետ։

ՊԱՐԻԶ։ Լրագիրները խօսում են Պեկինից միացեալ զօրքերը հեռացնելու մասին եւ նկատում են, որ եթէ պետութիւնները միմեանց հետ չը համաձայնվեն, Ֆրանսիան, որ կատարելապէս չահ չունի հիւսիսային Չինաստանում՝ հողային տիրապետութեան տեսակէտից, կարող է հաշտարար միջնորդ դատաւորի դեր խաղալ։

«Niw Iork Herald»-ին հեռագրում են Վաշինգտոնից, թէ արտաքին գործերի մինիստրութեան մէջ անխուսափելի են համարում կամ միջազգային զօրքերի շտապ հեռացումը Պեկինից եւ կամ պետութիւնների մէջ գոյութիւն ունեցող համաձայնութեան խախտումն։ Պէտք է այս էլ ասել, որ պետութիւնների միմեանցից բաժանվելը հաւանական չէ համարվում, որովհետեւ կարծվում է, որ եթէ հինգ պետութիւնները հեռացնեն իրանց զօրքերը Պեկինից, Գերմանիան եւս հարկադրված կը լինի հեռացնել իր զօրքերը։ Սպասում են, որ Իտալիան եւս նոյն կերպ կը վարվի։

ՊԱՐԻԶ։ Ֆինանսների մինիստր Վետտէ հասաւ Պարիզ։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Բօէրների հետախոյզները քանդեցին երկաթուղու գիծը Կլիպրիվեր կայարանի մօտ եւ այրեցին մի գնացք, որ կազմված էր 28 վագոնից։

ԲԱԴՖՕՆՏԷՆ։ Բուլլէր 14 մղոն առաջ գնաց դէպի Լէյդենբուրգ եւ անցաւ Կրոկոդիլ գետից։ Բօէրները կենտրոնացնում են իրանց զօրքերը Կրոկոդիլեան լեռներում, որտեղ այժմ գտնվում են բոլոր զօրաբաժինները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օգոստոսի 11-ին գեներալ Օրլովի զօրաբաժինը յարձակումն գործեց մի ամրացած դիրքի վրա Խիգանում, գրաւեց լեռնաշղթան եւ հալածեց թշնամուն։ Վիրաւորվեց կապիտան Սմոլեանինով, որ եւ մեռաւ։ Ապա զօրաբաժինը հասաւ Խինգօլս գետի բերանին։ Թշնամուց առնված են հինգ պողպատեայ թնդանօթ, 16 դրօշակ, որոնց մէջ եւ մի սպիտակ՝ չինական զօրաբաժնի հրամանատարինը եւ ամբողջ սայլախումբը։ Ազատված են երկու բանտուր։ Թշնամին փախաւ։ Մեր կորուստները բաղկացած են երեք սպանվածից եւ 11 վիրաւորվածներից։ Օգոստոսի 17-ին զօրաբաժինը անցաւ Եալ կայարանից, որ գտնվում է 12 վերստ հեռու Ցիցիկարից։

ՇԱՆԳՀԱԻ։ Պաշտօնական հեռագիրը Ցզինգտուֆուից հաղորդում է, թէ Սիջուանի փոխարքայ Գրենչժուէն եւ թաթար գեներալ Շտախվէն կայսերական հրամանով արձակված են պաշտօնից։ Ակներեւ է, որ կայսրուհին, առաջվայ նման, գտնվում է վրէժխնդիր յեղափոխականների ազդեցութեան տակ, որին պէտք է վերագրել նաեւ կայսրուհու փախուստը մայրաքաղաքից։ Այստեղի լրագիրները հաղորդում են, թէ Զժունգի, կարծեցեալ գահաժառանգի, ազգականը անձնասպանութիւն գործեց Պաստինֆուում։

Նանկինից ստացված տեղեկութիւններին նայելով՝ երաշտի պատճառով բրինձը լաւ հունձ չը տուեց։ Նանկինում ապրող օտարազգիները ենթարկվում են վիրաւորանքների։ Ցուղումը սաստկանում է։

Որովհետեւ օտարերկրացիների զօրքերը չարունակում են ցամաք դուրս գալ Շանգհայում, Լի-Խունգ-Զանգ առաւօտեան այցելութեան գնաց ֆրանսիական հիւպատոսին եւ երկարատեւ խօսակցութիւն ունեցաւ նրա հետ.

ԲՈՒԽԱՐԵՍՏ։ Իբրեւ ժամանակիցներ Միխայէլանոյի սպանութեան գործին՝ քննիչի մօտ են կանչված Բորիս Սարաֆով, Վլադիմիր Կովալեվ, Դաւիթ Իկոնոմով, Տրոլեվ եւ Ալէքսանդր Բուրլակով։ Որովհետեւ նրանց չէ կարելի բռնել, ուստի եւ վճիռը կը կայանայ նրանց բացակայութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բաքուից դուրս է գալիս	ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.	
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 53 »	եր. 5 » 34 »	
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 32 »	եր. 6 » 34 »	
Բաթում է հասնում	եր. 9 » 1 »	առ. 7 » 14 »	

№ 6 գնացքը։		№ 4 գնացքը։	
Բաթումից դուրս է գալիս	առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.	
Թիֆլիս է հասնում	եր. 7 » 15 »	առ. 8 » 42 »	
Թիֆլիսից դուրս է գալիս	» 7 » 18 »	» 10 » 05 »	
Բաքու է հասնում	ցեր. 12 » 10 «	» 5 » 16 »	

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 » 41 »
Բաթումից դուրս է գալիս	գիշ.	11 » 18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 » 30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ.	9 ժ. —
Ալէքսանդրօպոլ հասնում է	առ.	7 » 46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 » 56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 » 29 »
Ալէքսանդրօպոլից դուրս է գալիս	երեկ.	8 » 35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 » 15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենեբական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօտասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ի. Ֆ. Պրօտասեվիչ—6—7 ժ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ս. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ
ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ
կենսագրական-գրական տետրիւն.
Գիրքը վաճառվում է Կենտրոնական գրավաճառանոցում եւ մեզ մօտ՝ Նոր-Նախիջեւան։
Մեր հասցէն՝ Нахичевань на Дону, Ерванду Шахъ-Азизъ. 1—3

50,000 ռուբլի
գրաւական է հարկաւոր քաղաքի մուլքի համար, հիմնաւոր ապահովութիւն։ Դիմել անձամբ կամ նամակով. Միքայէլեան պրոսպէկտ, № 144а Վ. Զելենսկի։ 1—1

Въ непродолжительномъ времени поступятъ въ продажу новыя книги, соч. И Я. Бронъ-фонъ-Бреннеръ
1] Курсъ коммерческой ариѳметики, 2-е изданіе.
2] Самоучитель двойной бухгалтеріи и
3] Руководство по составленію отчетовъ.
Въ виду большихъ требованій и ограниченнаго количества экземпляровъ, принимается заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71.
6—20

Մայր Արոտի
ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր է մաթեմատիկայի համալսարանական մի ուսուցիչ՝ չաբաթական 18—19 դասով եւ 1500 ր. ռոճկով։ Դիմել ճեմարանի վարչութեան, Էջմիածին։ 3—3

ԴՊՐՈՑ
տիկ. Կատ. Լիսիցեանցի
երկու սեռի մանուկների համար։ Մրատեղ պարապմունք իր հարազատ երեխաների հետ։ Ընդունելութիւնը՝ սահմանափակված։ Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն։ Դիմել—օգոստոսի 26-ից—Բեհբութեան փողոց (Նախկին Սադովայա), սեփ. տ. № 29)։ (եչ.) 17—25

ԳԻՒՂԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՈՒՍՈՒՑԻՉ
Նախապատուութիւն կը տրվի Ներսիսեան շրջանաւարտներին, ժամրամասն պայմանների համար դիմել Сочи [Черн. грб.], Лаз. Айвазяну. 2—4

„ՎԻԼՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ"
Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ
Գոլով. պրոսպ., առաջին գիմնազիայի հանդէպ, տ. Քաչուէթի ս. Գէորգ եկեղ.
Աշնան համար ստացված են ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՆ
Փօրմէննից զգեստներ Կլասիքական գիմնազիայի, ռեալական և առևտրական ուսումնարանների համար։
Ընդունում ենք աւելի տեսակ պատուէրներ
1—10

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ
յայտնում է ի տեղեկութիւն ծնողների եւ խնամակալների, որ աշնանային ընդունելութեան քննութիւնները կը նշանակվեն սեպտեմբերի առաջին թուերում, մասին կը յայտարարվի լրագիրներում առանձին։
4—5 Դիրեկտորի փոխանակ՝ Ա. Եակովլեվ

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.
И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.
преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 5) Торговыя и вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.
Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 16—20
За успѣшныя занятія благодарности.
Годъ занятій одиннадцатый.

9—52 М. 9,7 (չ)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հասարիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և ժուրնալի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամեն այն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերի հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրկչեանցի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. չ.) 17—25

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, բաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, կանոնադրած նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1900 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար չարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան՝ ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մոտ և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պաստի ծախսը վճարելու։ 18—30

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Августа 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.